**Արձանագրություն N 4**
**«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«02» մայիսի 2019թ.
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը, Ա. Պապյանը,
Լ. Հարությունյանը, Լ. Ոսկանյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

**1. Գնանշման հարցում ընթացակարգի ստացված փաստաթղթերի մասին**
(Կ. Գասպարյան)

1.1 <<Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան>> ՓԲԸ-ն 25.04.2019թ. ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 30.04.2019թ. ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը, որի համաձայն՝ <<Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան>> ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է 307 000 դրամ հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

**2. Գնանշման հարցում ընթացակարգի արդյունքների գնահատման և ստացված եզրակացության ամփոփման մասին**
(Կ. Գասպարյան)

2.1 Հանձնաժողովը քարտուղարի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի պատճենները և Կոմիտեից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Scanned by CamScanner

2.2 Հանձնաժողովը որոշեց.

- հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ <<Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան>> ՓԲԸ-ի հայտը գնահատել անաբավարար:

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 44-րդ և 45-րդ կետերով և հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ <<Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան ընթացքը լուծելու համար:

- մասնակիցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերին չանդրադառնալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

**<u>3. Գնանշման հարցում ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ որոշում ընդունելու և հարկային հարցում կատարելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի մասին</u>**

<u>(Կ. Գասպարյան)</u>

Հանձնաժողովը որոշեց՝

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը սույն արձանագրության 2.2-րդ կետը՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբազեցրած մասնակիցներ ճանաչել <<ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՍԾԻՆ>> ՍՊԸ-ին:

3.1 Առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3.2 Հարկային հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Scanned by CamScanner

3.3 Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15:30-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Լ. Հարությունյան

_____ Լ. Ոսկանյան

_____ Ա. Պապյան

_____ Ն. Մեսրոպյան

Քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան

Scanned by CamScanner